Ա. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆՏԱՆՏԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՍԻՍՏԵՄՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԴԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ (1915—1916)

Սույն հոդվածի նպատակն է ցույց տալ Անտանտի տերությունների քաղաքական ու ռազմական ղեկավար շրջանների մտահոգությունն իրենց ռազմական գործողությունների համագործակցության ուղղությամբ 1915—1916 թթ. և ռուսական բանակի տեղը այդ համագործակցության սիստեմում։

Անհրաժեշտ է նշել, որ ինչպես արտասահմանյան, նույնպես և սովետական պատմագրության մեջ առաջին համաշխարհային պատերազմի պատմությանը նվիրված աշխատություններում, նախ, զգալիորեն թերագնահատվում է ռազմական գործողությունների համաձայնեցման նշանակությունը և այդ գործում եղած լուրջ դժվարությունները և, երկրորդ՝ համարյա զանց է առնվում ռուսական բանակի դերը վիլհելմյան Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Թուրքիայի բանակների ջախջախման գործում։ Հանգամանորեն չի լուսաբանված Անտանտի տերությունների ռազմա-քաղաքական բարձր մակարդակի խորհրդակցությունների, կոնֆերանսների ժամանակ արևմտյան դաշնակիցների գործադրած ճնշումները ռուսական բանակի հրամանատարության վրա։

Օգտվելով ռուսական բանակի սպառազինման ու մատակարարման գործում ստեղծված լուրջ դժվարություններից, Անգլիան ու Ֆրանսիան, մասամբ էլ Իտալիան ու ԱՍՆ-ը, փորձում են ճնշում գործադրել Ռուսաստանի վրա և վերջինիս զինված ուժերի ստրատեգիական պլանները առաջին հերթին հարմարեցնել իրենց սեփական շահերին։

1915—1916 թթ. Անտանտի ռազմական համագործակցության ստեղծման համար, կամ ավելի ուշ, Անտանտի մեջ մտնող տերությունների գերմանական բլոկի դեմ մղած ռազմական գործողությունները համաձայնեցնելու համար ձեռնարկված դիվանագիտական, տնտեսական ու ռազմական միջոցառումների ընդհանուր կոմպլեքսում առանձնահատուկ տեղ են գրավում 1915 թ. հուլիսին Կալեում, նույն թվականի դեկտեմբերին և 1916 թ. մարտին Շանտիլիում[1] և 1917 թ. փետրվարին Պետերբուրգում գումարված ռազմական կոնֆերանսները։ 1917 թ., մանավանդ 1918 թ., դաշնակիցները մի շարք կոնֆերանսներ ևս գումարեցին, որոնք հանգեցրին միասնական գլխավոր հրամանատարության ստեղծմանը Ֆոշի հրամանատարությամբ, սակայն այդ կոնֆերանսներին Ռուսաստանն արդեն չէր մասնակցում։

Հաշվի առնելով, որ արևմտյան ճակատում անգլո-ֆրանսիական և մասամբ էլ բելգիական բանակները համեմատարար ոչ մեծ ռազմաճակատում կենտրոնացրել էին խոշոր զինված ուժեր և ռազմական տեխնիկա, գերմանական գլխավոր հրամանատարության շրջաններում սկսում են մշակել պլաններ, որոնց համաձայն 1915 թ. գլխավոր հարվածը պետք է ուղղվեր Ռուսաստանի դեմ, այն հաշվով, որ վերջինս դուրս բերվեր շարքից և գերմանացիները հնարավորություն ստանային գլխավոր ուժերը կենտրոնացնել արևմտյան ճակատում։

Այդպես էլ կատարվում է։

1915 թ. ռազմական գործողությունները ևս կրում էին ակտիվ բնույթ։ Անգլիան ցուցաբերում է վճռականություն և ծովային բլոկադայի ենթարկելով Գերմանիային՝ զրկում է նրան արտաքին աշխարհի հետ տնտեսական հարաբերություններից։

Գերմանիան 1914 թ. պատերազմի սկզբին Ռուսաստանի դեմ ուներ 42 հետևակային և 13 հեծյալ դիվիզիաներ, ընդամենը 55 դիվիզիա, իսկ 1915 թ. ամռան վերջում 116 հետևակային և 24 հեծյալ դիվիզիաներ ընդամենը 140 դիվիզիա, իսկ Ֆրանսիայի դեմ պատերազմի սկզբին ուներ 80 հետևակային և 10 հեծյալ, 1915 թ. ամռան վերջում՝ 99 հետևակային և մեկ հեծյալ դիվիզիա՝ ընդամենը 91։

Այս տվյալները հաստատում են, որ 1915 թ. գերմանացիների հարձակման գլխավոր թատերաբեմը եղել է արևելյան ճակատը։ Այստեղ գերմանացիներին հաջողվեց գրավել Լեհաստանի

---

[1] Արվարձան Փարիզի մոտ։

զգալի մասը, օգնել Ավստրո-Հունգարիային՝ հետ վերցնելու Գալիցիան, իսկ Բալկաններում՝ ջախջախել սերբական բանակը։

Արևմտյան ռազմաճակատում Անգլիան ու Ֆրանսիան հնարավորություն են ստանում՝ համալրել իրենց բանակները, հագեցնել նրանց ռազմական տեխնիկայով և նախապատրաստվել նոր հարձակման։

1914 և 1915 թթ. ծավալված ստրատեգիական խոշոր օպերացիաները ցույց տվին, որ դաշնակիցների միջև գոյություն ունեն լուրջ տարաձայնություններ։ Նրանց բանակների ռազմական գործողությունները չէին համաձայնեցվում միմյանց հետ։ Գերմանական բանակը օգտվում էր դրանից և շոշափելի հարվածներ հասցնում Անտանտի տերություններին։ Հենց պատերազմի առաջին իսկ օրից նկատելի էր, որ Անգլիան ու Ֆրանսիան աշխատում են օգտագործել ռուսական բանակի մատակարարման ու ղեկավարման գործում եղած դժվարությունները և անհավասար պայմանների մեջ դնել նրան՝ որպես իրենց դաշնակցի։

Հատկանշական է, որ 1914 թ. Ֆրանսիայի ճգնաժամային օրերին ռուսական բանակը իր համար խիստ անբարենպաստ պայմաններում անցավ հարձակման և զգալիորեն թեթևացրեց նրա վիճակը, իսկ 1915 թ. ռուսական բանակի ծանր օրերին անգլո-ֆրանսիական բանակները ակտիվ գործողությունների չդիմեցին։

Այնուամենայնիվ, դաշնակիցների ռազմական ու քաղաքական ղեկավար շրջաններում սկսում են լրջորեն խորհել իրենց գործողությունների համաձայնեցման, կոորդինացման մասին։

Ռազմական կոալիցիաների միջև մղվող պատերազմների պատմության մեջ աստիճանաբար երևան են գալիս նոր երևույթներ, այն է՝ տվյալ կոալիցիայի մեջ մտնող պետությունների բանակների ստրատեգիական գործողությունները համաձայնեցնելու համար միջպետական խորհրդակցական ղեկավար օրգանի ստեղծումը։

Դեռևս 1914 թ. սեպտեմբերի 4-ին Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը Լոնդոնում համաձայնության են գալիս, որպեսզի ամբողջ պատերազմի ընթացքում անջատ հաշտություն չկնքվի թշնամու հետ, իսկ երբ վրա հասնի հաշտության պայմանագիր կնքելու ժամանակը, ապա առանց նախորոք տեղյակ պահելու երեք տերությունների կառավարություններին, դարձյալ ոչ մեկը իրավունք չվերապահի իրեն ինքնուրույն կերպով պայմանագիր կնքելու գերմանական բլոկի պետությունների հետ։

Այս դեկլարացիան բավական լուրջ նախադրյալներ ստեղծեց Անտանտի պետությունների արտաքին քաղաքականության և պատերազմի վարման կարևորագույն հարցերի կոորդինացման ու համաձայնեցման համար։

Անտանտի տերությունների զինված ուժերի գործողությունների համաձայնեցման և առհասարակ կոալիցիայի տերությունների տնտեսական, քաղաքական, դիվանագիտական համագործակցության ուղղությամբ առավել ակտիվ միջոցառումների ձեռնարկումը սկսվում է 1915 թ. ամռանից և ընդհուպ մինչև 1918 թվականը դրանք ավելի հարաճուն ու ավելի ինտենսիվ են դառնում։

Անգլիայի ու Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրների առաջին հանդիպումը տեղի է ունենում 1915 թ. հուլիսի 3-ին Կալե քաղաքում։ Այստեղ երկու մինիստրները սկզբունքային համաձայնության են գալիս դաշնակիցների ռազմական գործողությունների հարցում։ Դրանից երկու օր անց դումարվում է դաշնակիցների ռազմական խորհրդի նիստ՝ Ֆրանսիայի գերագույն գլխավոր զորահրամանատար գեներալ Ժոֆֆրի նախագահությամբ։

Փարիզում ռուսական դեսպան Իզվոլսկին, 1915 թ. հուլիսի 9-ին, իր № 417 գաղտնի հեռագրով տեղյակ է պահում արտգործմինիստր Սազոնովին, որ ռազմական խորհրդին մասնակցում էին Ժոֆֆրը, անգլիական զորքերի գլխավոր զորահրամանատար ֆելդմարշալ Ֆրենչը, Ռուսաստանի, Բելգիայի և Սերբիայի ռազմական գործակալները[2]։ Գլխավոր խնդիրը, ըստ Իզվոլսկու, որ քննարկվել է այդ ռազմական խորհրդում, կայանում էր նրանում, որպեսզի ընդհանուր եզրակացության գան առաջիկա ռազմական գործողությունների բնույթի հարցում, հարձակվել, թե պաշտպանվել մինչև անհրաժեշտ ուժերի կուտակումը։ Նույն թվականի հուլիսի 11-ին, Իզվոլսկին իր № 420 գաղտնի հեռագրում ավելի հանգամանորեն է հաղորդում Անտանտի ռազմական խորհրդի որոշման բովանդակության մասին։

«Բաց անելով նիստը, գեներալ Ժոֆֆրը ասաց, որ պատերազմի ներկա ժամանակաշրջանում անհրաժեշտ է, որպեսզի դաշնակիցները իրենց ռազմական օպերացիաները համաձայնեցնեն։ Տեսականորեն դաշնակից զորքերը պիտի երեք թատերաբեմերում ձեռնարկեին եռանդուն հարձակում։ Սակայն գործնականում այդ անհնար է։ Ուստի հարկավոր է սկզբունքորեն որոշել, թե դաշ-

[2] ЦГАВМФ СССР, ф. 418, оп. 1, д. 3017, л. 1.

նակիցների այն բանակը, որը տվյալ պահին իր վրա կրում է հակառակորդի գլխավոր ուժերի ճնշումը, իրավունք ունենա սպասելու, որ դաշնակիցների մյուս բանակները օգնության կգան հոանդուն հարձակումով իրենց թատերաբեմերում[3]։ Օգոստոսին և սեպտեմբերին (1914 թ.— Ա. Հ.) ռուսական բանակը հարձակման անցավ Արևելյան Պրուսիայում և Գալիցիայում, որպեսզի թեթևցնի ֆրանսիական և անգլիական բանակների վիճակը։ Ներկայումս նրա (ռուսական բանակի — Ա. Հ.) դրությունը պահանջում է նման գործողություններ անգլիացիների ու ֆրանսիացիների կողմից։[4]

Առաջ քաշելով նման դրույթ, Ժոֆֆրը շտապում է համոզել արևմտյան դաշնակիցներին, որ Ռուսաստանին աջակցելը բխում է ոչ միայն պայմանագրային պարտականություններից, կամ Անգլիայի ու Ֆրանսիայի պատվից, այլ առաջին հերթին իրենց, դաշնակիցների «սեփական շահերից»[5]։

Ժոֆֆրի ելույթում պարզորոշ կերպով ընդգծված է նաև հետևյալ կարևոր միտքը, որ շատ պատմաբաններ երբեմն անհիմն կերպով բացառում են։ Ֆրանսիական գերագույն գլխավոր գրասենյակատարը ստիպված է խոստովանել, որ տվյալ պահին գերմանական բլոկի հիմնական ուժերը կենտրոնացված են ռուսական ճակատում։ «Արևելյան ռազմաճակատում վերջին երկու ամսում ռուսական բանակն իր վրա է կրում գերմանացիների և ավստրիացիների հիմնական ուժերի ճնշումը և ստիպված է ժամանակավորապես նահանջել — ասում է Ժոֆֆրը[6]։

Անտանտի ռազմական առաջին խորհրդակցության մասնակիցների զեկուցումների կամ ելույթների բովանդակությունը Իզվոլսկին հաղորդում է հետևյալ կերպ.

1. Ֆրանսիական գեներալ Ժոֆֆրը գտնում է, որ մի քանի շաբաթ հետո, երբ ափ կիջնեն անգլիական 6 դիվիզիաները, իսկ ֆրանսիական բանակը կհամալրվի և զինամթերք (գլխավորապես հրետանային արկեր) կստանա, պետք է անցնեն նոանդուն հարձակման։ Իտալիան նույնպես պետք է շարունակի հարձակողական գործողությունները։ Դարդանելի օպերացիային Ժոֆֆրը երկրորդական նշանակություն է տալիս։

2. Ֆելդմարշալ Ֆրենչը հայտարարում է, որ բաժանում է Ժոֆֆրի կարծիքն առաջիկայում ուժեղ հարձակման անցնելու հարցում և անգլիական հրամանատարությունը կանի իրենից կախված ամեն ինչ այդ հարձակման հաջող ելքի համար[7]։

3. Իտալիայի ռազմական գործակալը հայտարարում է, որ գեներալ Ժոֆֆրի մտքերը լիովին համընկնում են գեներալ Կագորանի մտքերի հետ, և իտալական բանակը հարձակման կանցնի Վիեննայի ուղղությամբ[8]։

4. Ռուսաստանի ռազմական գործակալ կոմս Իգնատիևը շնորհակալություն է հայտնում գեներալ Ժոֆֆրին և ներկա գտնվողներին նրանց հեղինակավոր խոստումների համար, որոնց նպատակն է իրենց թատերաբեմերում Գերմանիայի դեմ հարձակողական գործողություններ վարելով՝ թեթևացնել ռուսական բանակի վիճակը։

Ռազմական խորհուրդը ընդունում է հետևյալ որոշումը՝

«1. Արևմտյան ռազմաճակատում ֆրանսիական զինված ուժերը շարունակելու են մի շարք յոկալ (տեղական նշանակություն ունեցող) գործողություններ և նոր հարձակման են անցնելու, հենց որ այդ նրանց համար հնարավոր լինի։ Անգլիական բանակը, որը շուտով պետք է նոր դիվիզիաներ ստանա, լիակատար աջակցություն ցույց կտա ֆրանսիական բանակի հարձակողական գործողություններին։ Բելգիական բանակը նույնպես կմասնակցի այդ գործողությանն՝ ըստ իր ուժերի։

2. Իտալա-սերբական ռազմաճակատում իտալական բանակը որքան հնարավոր է շուտափույթ կերպով կդարգացնի իր սկսած հարձակումը Լայբախ-Կլագենֆուրտ ուղղությամբ։ Սեր-

---

3 Տվյալ պահին երեք թատերաբեմեր Ժոֆֆրը հաշվում էր՝ ֆրանսիական, անգլիական գորքերի տեղաբաշխումն արևմուտքում, ռուս-գերմանական ու ռուս-ավստրիական ճակատը արևելքում և Մերձավոր արևելքը։

4 ЦГАВМФ СССР, ф. 418, оп. 1, д. 3017, л. 1.

5 Նույն տեղում։

6 Նույն տեղում։

7 ЦГАВМФ СССР, ф. 418, оп. 1, д. 3017, л. 2.

8 Նույն տեղում։

բական բանակը իր կողմից իր գործողությունները պետք է համաձայնեցնի իտալական բանակի գործողությունների հետ»[9]։

Ռուսաստանի ռազմական գործակալ կոմս, գնդապետ Ա. Ա. Իգնատևը հետագայում, երբ նա արդեն սովետական գեներալ էր, իր մեմուարներում[10] հիմնականում հաստատում է այն, ինչ գրված է Անտանտի ռազմական խորհրդի արձանագրություններում և Իզվոլսկու հեռագրերում, սակայն, միաժամանակ, մեկնաբանում է, որ ռուսական գլխավոր հրամանատարությունը կարծես թե առանձին նշանակություն չէր տալիս դաշնակիցների այդ միջոցառմանը, իսկ իրեն լիազորել են մասնակցելու այդ խորհրդակցությանը առանց որևէ պարտականություն վերցնելու իր վրա ռուսական բանակի գործողությունների համար։

«Կայանը[11],— գրում է Իգնատևը,— ըստ երևույթին նշանակություն չի տվել դաշնակիցների այդ ձեռներեցությանը, քանի որ իմ և դեսպանի կրկնակի հեռագրերից հետո միայն, ես 2 ժամ մինչ առաջին նիստի բացումը թույլտվություն ստացա մասնակցել խորհրդին «առանց իրավունքի որևէ պարտականություն վերցնելու ռուսական բանակի գործողությունների համար» և ուրիշ ոչ մի հրահանգ, հասկանալի է, ես չեմ ստացել և մտա Ժոֆֆրի աշխատասենյակը, որտեղ տեղի էր ունենում խորհրդակցությունը, դատարկ ձեռքերով»[12]։

Իգնատևը մոայլ գույներով է նկարագրում իր վիճակն այդ խորհրդակցության ժամանակ։ Նա տեղյակ չէր իրերի իսկական դրությանը ռուս-գերմանական ճակատում, չգիտեր Գերագույն գլխավոր հրամանատարության պլաններն ու մտադրությունները և Միլերանի ու Ժոֆֆրի դիպուկ հարցերին, որոնք վերաբերում էին ռուսական բանակի ընդհանուր վիճակին, նրա հարձակողական ընդունակությանը, ճակատում ստեղծված ծանր դրությանն ու հեռանկարներին, չէր կարողանում որոշակի պատասխաններ տալ։ Նա խոստովանում է, որ իր պատասխանները նման էին ակադեմիայում պրոֆեսորներին քննություն տվող ուսանողների պատասխանների և դրանք համոզիչ չէին Արևմուտքի փորձված գայլերի համար։

Ակամայից հարց է ծագում. ինչո՞ւ Ռուսաստանը չէր ուղարկել իր Գերագույն գլխավոր զորահրամանատարին, կամ նրա կողմից լիազորված ուրիշ բարձրաստիճան զինվորականի։ Մեր կարծիքով, դա բացատրվում է հետևյալով։ Ինչպես տեսանք, դաշնակիցների ռազմական խորհուրդը չնայած տեսականորեն և դեկլարատիվ կերպով հայտարարել էր ռուսական ճակատին օգնելու մասին, սակայն ըստ տեղի ու ժամանակի կոնկրետ ոչ մի որոշում չի ընդունել։ Ռուսական հրամանատարությունը որոշ չափով տեղյակ էր արևմտյան տերությունների այդ մաններին և առանձին կարևորություն չէր տալիս նրանց դեկլարացիաներին։

Երկրորդ, ռուսական Գերագույն գլխավոր հրամանատարությունը գերմանական ու ավստրո-հունգարական հուժկու հարձակման և ռուսական բանակի նահանջի պայմաններում չէր կարող թողնել ռազմաճակատների ղեկավարությունը և վտանգավոր ու դժվարին ճանապարհներով գնալ Փարիզ։

Սակայն հետագայում և Նիկոլայ 2-ը և բարձրագույն հրամանատարությունը հանգեցին այն սգրակացության, որ այնուամենայնիվ դաշնակիցների մոտ պետք է ունենալ ավելի հեղինակավոր և լիազորություններով օժտված անձնավորություն։ Ռուսաստանը կոալիցիայի անդամ էր և նա չէր կարող շահագրգռված չլինել, թե ինչ են որոշում նրա դաշնակիցները և ինչ դիրքորոշում ունեն նրանք պատերազմի բախտին վերաբերող հույժ կարևոր հարցերում։

1915 թ. հուլիսյան խորհրդակցությունը ցույց տվեց, որ դաշնակիցների ռազմական ներկայացուցիչների հանդիպումները՝ բարձր մակարդակով որոշակի անհրաժեշտություն է կոալիցիոն պատերազմում։ Հասկանալի պատճառով ոչ Գերագույն գլխավոր հրամանատարները և ոչ էլ նրանց տարբերի պետերը հաճախակի չէին կարող հանդիպել։ Դրա փոխարեն կոալիցիայի մեջ մտնող պետությունները փոխադարձաբար նշանակում էին իրենց լիազոր ներկայացուցիչները, գործակալները կամ կցորդները, որոնք մշտապես գտնվում էին Գերագույն հրամանատարությունների կայաններում։

Ռուսաստանի համար Անտանտի ռազմական համագործակցության ընդհանուր սիստեմում ամենալուրջ հարցերից մեկը սկզբից մինչև վերջ եղել է ռազմական մատակարարման հարցը, որով զբաղվում էին ռազմական գործակալները, ֆինանսների մինիստրները, հետագայում նաև ռազմական կոմիտեները։ Բացի դրանից, ռուսական կառավարությունը պատերազմի տարիներին մի

---

9 Նույն տեղում, թ.

10 А. А. Игнатьев, Пятьдесят лет в строю, т. II, стр. 216.

11 Բարձրագույն հրամանատարության պաշտոնատեղը։

12 А. А. Игнатьев, 50 лет в строю, т. II, стр. 216.

շարք դելեգացիաներ է ուղարկել Անգլիա և Ֆրանսիա բանակցությունների և զանազան համաձայնությունների համար։

Անգլիան ու Ֆրանսիան բազմիցս փորձեր են կատարել օգտվել Ռուսաստանի տնտեսական ներամնացությունից և իրենց կողմից ռուսական բանակի համար տրամադրած հրանոթների կամ հրացանների համար պահանջել ավելին, քան պետք է, իսկ երբեմն էլ Ռուսաստանին դրել ամենանվաստացուցիչ պայմանների մեջ։ Այդ առանձնապես ցցուն կերպով արտահայտվեց 1915 թ., երբ ռուսական որոշ զորամասեր ուղարկվեցին Ֆրանսիա։ Չնայած արևելյան ճակատում գրությունն ավելի ծանր էր, քան արևմտյանում, ֆրանսիական կառավարությունը փաստորեն իր տված հրանոթների փոխարեն պահանջեց ռուս զինվորի արյունը իր տերիտորիայի վրա։ Հետաքրքիր է, որ անգամ ռազմական մինիստր Պոլիվանովը, 1915 թ. դեկտեմբերի 5-ին, Նիկոլայ 2-ին գրած նամակում ստիպված էր դժգոհել այդ գործարքի համար։ «Գերագույն գլխավոր հրամանատարության շտաբի պետը հաղորդել է ինձ,— գրում է Պոլիվանովը,— որ ֆրանսիական կառավարությունը առաջ քաշելով այդ հարցը (Ֆրանսիա զորք ուղարկելու հարցը — Ա. Հ.), ըստ երևույթին, բոլորովին նկատի չի ունենում հարցի բարոյական կողմը։ Մարդուն դիտելով որպես բացառիկ նյութական մաս և առարկա, նա հաշվի չի առնում այն բացասական տպավորությունը, որ կթողնի ռուսական հասարակության լայն շրջանների վրա, մարդկային մատերիայի նման մեկնաբանումը»[13]։

Պոլիվանովը թունդ միապետական գեներալներից էր, սակայն ինչպես նրան, նույնպես և շատ ուրիշ գեներալներին խորթ չէին հայրենասիրական զգացումները և հարգանքը դեպի ռուս զինվորը, որին այժմ ցարը ցանկանում էր պարզապես փոխանակել հրանոթի և արկի հետ[14]։ Փարիզում ռուսական դեսպան Իզվոլսկին նույնպես դեմ էր, որ ռուսական զինվորներ ուղարկվեն Ֆրանսիա։ Նրա փաստարկումների հիմքում ընկած էր հարցի և՛ քաղաքական և՛ բարոյական կողմը։ Ըստ Իզվոլսկու, ռուսական բանակի ներքին կարգ ու կանոնը, դաստիարակության դրվածքը, սպաների և զինվորների միջև եղած հարաբերությունը խիստ կերպով տարբերվում է ֆրանսիականից, և ինքնըստինքյան ռուսական զորքերի առկայությունը Ֆրանսիայում ավելի շուտ կվատացնի երկու երկրների հարաբերությունը, քան թե կբարելավի։ Հետագա դեպքերը ցույց տվեցին, որ Պոլիվանովն ու Իզվոլսկին ճիշտ էին։ Երբ 1917 թ. Կերենսկու հրամանով Ֆրանսիայում ճնշում էին ապստամբ ռուսական բրիգադան, ֆրանսիական զորքերը, Լյա Կուրտինի ճամբարի շրջապատման երկրորդ օղակն էին հանդիսանում։ Այլ կերպ ասած՝ ֆրանսիական հրամանատարությունը հրետանային կրակով ձգտում էր լռեցնել ռուս զինվորներին, որոնք ցանկանում էին Հայրենիք վերադառնալ, ուր այլևս ցար չկար։

Չնայած Ֆրանսիայում ռուսական ռազմական գործակալ, կոմս, գնդապետ Ա. Իգնատևը կրթված ու հայրենասեր զինվորական էր և վատ չէր կատարում իր պարտականությունները, սակայն Նիկոլայ 2-ը և մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչը գտնում էին, որ ֆրանսիական գլխավոր հրամանատարության կայանում պետք է մշտապես լինի ավելի բարձր կոչում ու դիրք ունեցող անձնավորություն։ 1915 թ. վերջերին Ֆրանսիա է ժամանում գեներալ Ժիլինսկին։

Ժիլինսկին և Իգնատևը մասնակցում են Անտանտի ռազմական կոնֆերանսին, որը տեղի ունեցավ 1915 թ. դեկտեմբերին Շանտիլիում։

Պատերազմը սկսելուց հետո դաշնակիցներն առաջին անգամ էին լայն ներկայացուցչական կոնֆերանս հրավիրում։ Մեր տրամադրության տակ են այդ կոնֆերանսի աշխատանքների ողջ ընթացքն արտացոլող բոլոր փաստաթղթերն ու արձանագրությունները։ Դրանք պատմական կարևոր նշանակություն ունեցող փաստաթղթեր են։ Նրանցում փայլուն կերպով դրսևորված է դաշնակիցներից յուրաքանչյուրի դիրքն ու մոտեցումը պատերազմի հետ կապված սկզբունքային բոլոր հարցերում[15]։

Ռազմական կոնֆերանսն ամենից առաջ քննության է առնում ռազմաճակատներում տիրող գրությունը, որոշվում է յուրաքանչյուր թատերաբեմի դերն ու նշանակությունը, Անտանտի և գեր-

---

[13] «Красный Архив», 1931, № 44, стр. 153.

[14] Զորքեր, համենայն դեպս, ուղարկվում են Ֆրանսիա և ռուսական բրիգադները մասնակցում են Գերմանիայի դեմ մղված ճակատամարտերի առավել ծանր հատվածներում։ Փետրվարյան հեղափոխությունից հետո այդ բրիգադներից մեկը ապստամբում է և պահանջում վերադարձ Հայրենիք։ Կերենսկու հրամանով ֆրանսիական զորքի օգնությամբ, Լյա Կուրտինի ճամբարում հրետանային կրակով ճնշում են ապստամբությունը, իսկ զինվորներին ու սպաներին աքսորում դեպի աշխարհի տարբեր անկյուններ։

[15] ЦГВИА СССР, ф. 2000, оп. 1, д. 191, л. 41—109.

մանական բլոկի ուժերի փոխհարաբերությունը և այդ փոխհարաբերության զարգացման տենդենցը։

Ռազմաճակատներում ուժերի փոխհարաբերությունը գնահատելիս ինչպես Ֆրանսիայի ներկայացուցիչ գեներալ Ժոֆֆրը, նույնպես և նրա կոլեգաները հանգում են այն եզրակացության, որ ընդհանուր առմամբ 1915 թ. Անտանտի դիրքերն ամրացել են, իսկ Գերմանիայինը թուլացել։ Ժամանակն աշխատում է Անտանտի օգտին։

Այնուհետև կոնֆերանսն ուրվագծում է դաշնակիցների ապագա գործողությունների հիմնական ուղղություններն ու դրանց համաձայնեցման հարցերը։ Կոնֆերանսի փաստաթղթերում արձանագրված է, որ 1915 թ. Գերմանիան և նրա դաշնակիցները իրենց գլխավոր հարվածը ուղղել էին Ռուսաստանի դեմ և զգալի հաջողությունների հասել։ Չնայած շոշափելի կորուստներին Գերմանիան գեռ հնարավորություն ուներ ուժերի գերազույն լարումով նոր հուժկու հարձակումներ սկսել ինչպես արևելքում, նույնպես և արևմուտքում։ Սակայն Անտանտի մարդկային ու նյութական ռեսուրսները զգալիորեն գերազանցում են գերմանական բլոկի հնարավորություններին։

Ահա Ժոֆֆրի բերած մի քանի տվյալները, որը նա վերջնական չի համարում և խնդրում է կոնֆերանսի մասնակիցներին ճշտումներ մտցնել, եթե դրա անհրաժեշտությունը զգացվում է.

Երկու կոալիցիաների բնակչության և բանակների թիվը[16]։

	Քառյակ համաձայնությունը		Կենտրոնական կայսրությունները	
Բնակչության թիվը	273 000 000	մարդ	152 000 000	մարդ
Բանակների անձնակազմի թիվը	6 080 000	մարդ	6 110 000	մարդ

Որից՝

ֆրանսիական բանակը	2 600 000	մարդ	չերնիգորիական բանակը	40 000	մարդ
անգլիական »	1 100 000	»	գերմանական »	3 610 000	»
ռուսական »	1 500 000	»	ավստրիական »	1 500 000	»
իտալական »	1 000 000	»	բուլղարական »	400 000	»
բելգիական »	80 000	»	թուրքական »	600 000	»
սերբական »	100 000	»			

Սակայն այս տվյալները հեռու էին իրականությունից։

Ռուսաստանն այդ ժամանակ զենքի տակ էր պահում ոչ թե մեկուկես միլիոն մարդ, այլ զգալի չափով ավելի։ Գեներալ Ժիլինսկին նիստում հայտարարում է, որ ռուսական բանակը եվրոպական թատերաբեմում ունի 56 կորպուս, մի շարք առանձին դիվիզիաներ, որոնց ընդհանուր անձնակազմի թիվը հասնում է մոտ 2 մլն. 755000-ի, չհաշված աշխարհազորի գծով ստեղծված զորամասերը[17]։

Ըստ պատմաբան Ա. Զայոնչկովսկու, Ռուսաստանը 1914 թ. դեկտեմբերին ուներ 107 դիվիզիա, իսկ 1915 թ. դեկտեմբերին՝ 136 դիվիզիա[18]։ Նույն հեղինակը նշում է նաև ռուսական բանակի հսկայական կորուստները։ 1914—1915 թթ. ռուսական բանակը կորցրել է 312 հազար սպանված, 1 մլն. 548 հազ. գերի կամ անհետ կորածներ։ Միայն սպայական կազմի կորուստը հասնում է 45 հազարի[19]։ Վերջինիս վերականգնումը խիստ դժվար էր, և դա իրեն խորը կերպով զգացնել տվեց նաև պատերազմի հետագա տարիներին։

Չնայած այդ բոլորին, ռուսական բանակում 1915 թ. վերջին, ինչպես տեսնում ենք, առկա էր 136 դիվիզիա։ Պետք է ենթադրել, որ, որոշ նկատառումներից ելնելով, ռուսական հրամանատարությունը ոչ բոլոր տվյալներն էր հաղորդում Փարիզ։

Շանտիլիի 1915 թ. դեկտեմբերյան կոնֆերանսի եզրահանգումը հետևյալն էր՝ «Դիվանագիտական, ռազմական և տնտեսական տեսակետից կոալիցիայի ջանքերն ապագայում լավագույն կերպով համաձայնեցնելու համար անհրաժեշտ է ավելի սերտ հարաբերություններ հաստատել

---

[16] ЦГВИА СССР, ф. 2000, оп. 1, д. 191, л. 58.

[17] ЦГВИА СССР, ф. 2000, оп. 1, д. 191, л. 65.

[18] Зайончковский. Мировая война 1914—1918 гг., Госвоениздат НКО СССР, М., 1938, т. II, стр. 283 (приложение).

[19] Зайончковский, указанная книга, т. I, стр. 363.

այն օրգանների միջև, որոնց հանձնարարված է դաշնակից ամեն մի տերության ռազմական գործողությունների ղեկավարությունը։

Առաջին պայմանը նման համաձայնության համար, ըստ երևույթին, հանդիսանում է մշտական կապի հաստատումը դաշնակիցների բանակների գլխավոր հրամանատարների միջև»[20]։

Անշուշտ, նման դրվածքը համապատասխանում էր Անտանտի ընդհանուր շահերին, առաջին հերթին Անգլիայի ու Ֆրանսիայի շահերին։ Սակայն կոնֆերանսում շատ քիչ էր հաշվի առնվում ռուսական բանակի շահերը։ Ռուսական պատվիրակությունը, եթե կարելի է 2 հոգու՝ (Ժիլինսկուն և Իգնատիևի) պատվիրակություն համարել, ստիպված էր կախման մեջ գտնվել իր դաշնակիցներից, ինչպես վերևում նշեցինք, ամենից առաջ ռազմական մատակարարման հարցերում։

1915 թ. դեկտեմբերի 7-ի Շանտիլիի կոնֆերանսի արձանագրությանը կցված հավելվածից կարելի է լավ պատկերացում ունենալ ռուսական բանակի ռազմական մատակարարման վիճակի մասին։

Բերում ենք այդ հավելվածի լրիվ տեքստը։

Ռուսական բանակի նյութական վիճակը[21].

1) Ռուսական բանակի Հրացանների պահանջը.

Պահանջվում է անհապաղ . . .	1200 000	հատ
Հետագայում ամսական . . .	200 000	»
Ռուսաստանում կարող էր պատրաստվել ամսական . . .	70 000	»
Ամերիկայից ստացվում էր ամսական . . .	16 000	»

2) Ռուսաստանը պետք է առաջիկայում ստանար կամ ստանալու պրոցեսում էր՝

550 000 ֆրանսիական հրացան, յուրաքանչյուրին 176-ական փամփուշտ. 400 000 ճապոնական և 35 000 մեքսիկական հրացան։ Տարվա վերջում՝ 200 000 ճապոնական, 200 000 ավստրիական և 500 000 իտալական հրացան

3) Ռուսաստանի ռազմամթերքի պահանջները.

1874 թ. սիստեմի հրացանի համար ամսական 75 փամփուշտ յուրաքանչյուր հրացանի, ընդամենը ամսական 40 000 000 փամփուշտ։ 1886 թ. սիստեմի հրացանի համար ամսական 40 000 000 փամփուշտ։

Նույնպիսի դրություն էր տիրում նաև հրետանու ասպարեզում։

Ռուսական բանակը առանձնապես կարիք էր զգում ծանր հրանոթների և արկերի։

Հենց այդ ծանր վիճակն էր, որ ստիպել էր ցարական կառավարությանը նույն թվականի հոկտեմբերին հատուկ միսիա ուղարկել Անգլիա ու Ֆրանսիա բանակցություններ վարելու ռազմական մատակարարման հարցով։ 1915 թ. Ռազմա-ծովային Գերագույն շտաբի փոխծովակալ Ռուսինի գլխավորությամբ ռուսական հատուկ միսիան մասնակցում է Անտանտի խորհրդակցություններին, ուր քննության են առնվում ռազմական մատակարարման հիմնական հարցերը։ Փոխծովակալ Ռուսինը հանդիպումներ է ունենում Անգլիայի այն ժամանակվա մատակարարման մինիստր Լ. Ջորջի, ռազմա-ծովային մինիստր Վիտչների, Ֆրանսիայի մատակարարման մինիստր Ալբերտ Թոմայի և մյուսների հետ։ Ռուսաստան վերադառնալուց հետո իր ներկայացրած հաշվետվության մեջ[22] Ռուսինի բերած տվյալները համարյա համապատասխանում են Շանտիլիի կոնֆերանսում գեներալ Ժիլինսկու ներկայացրած տվյալներին։ Փոխծովակալը դժգոհում է, որ դաշնակիցները հեշտությամբ ոչինչ չեն կիջում Ռուսաստանին։

Ռուսական բանակի վիճակը օրըստօրև ծանրանում էր։ 1915 թ. կորուստները որոշ իմաստով անհնար էին դարձնում բանակի լրիվ համալրումն ու վերազինումը։ Անգլիան ու Ֆրանսիան, որոնք որոշ չափով արդեն կարգավորել էին իրենց հարաբերությունները ԱՄՆ-ի հետ, տնտեսական լուրջ օգնություն էին ստանում նրանից։ Անգլո-ֆրանսիական գաղութների ու դոմինիոնների միջոցներն ու ռեսուրսները մոբիլիզացվում էին պատերազմական նպատակների համար։

Այդ բոլորը, ինչպես նաև անգլո-ֆրանսիական բանակների համալրումն ու վերազինումը հնարավոր եղան առաջին հերթին ռուսական բանակի գործողությունների հետևանքով։ Մինչդեռ այժմ դաշնակիցները Ռուսաստանի նկատմամբ սկսում են վարել ավելի կեղծ և ոչ բարեկամական քաղաքականություն։

Այդ են վկայում բազմաթիվ փաստաթղթեր։

---

[20] ЦГВИА СССР, ф. 2000, оп. 1, д. 191, л. 58.

[21] ЦГВИА СССР, ф. 2000, оп. 1, д. 191, л. 103.

[22] См. «Исторический Архив», т. V, изд. АН СССР, М., 1949 г., стр. 251—286.

Այսպես, օրինակ, դեռևս 1915 թ. դեկտեմբերի 26-ին Ժիլինսկին իր № 24 գաղտնի նամակում՝ ուղղված Գերագույն շտաբի պետ Ալեքսեևին, բողոքում է Ժոֆֆրի մեծամիտ և կոպիտ վերաբերմունքի մասին։

«Իր շտաբի պետ գեներալ Պենլեի ներկայությամբ, գրում է Ժիլինսկին, նա (Ժոֆֆրը — Ա. Հ.) բավականին բարկացած ու գրգռված հայտարարեց, որ կռվում է միայն Ֆրանսիան, իսկ մնացած բոլորը միայն օգնություն են խնդրում նրանից, որ այժմ ոչ մի հարձակման մասին խոսք լինել չի կարող, քանի որ գերմանացիները դատարկում են ռուսական ճակատը Ֆրանսիայի վրա գրոհելու համար։

Այն ժամանակ, ես չպատասխանելով այդ հարձակումներին, շատ զուսպ կերպով հայտարարեցի, որ ինչպես իրեն հայտնի է, մեզ մոտ դրությունը բոլորովին փոխվել է, որի համար էլ ես եկել եմ բանակցելու, թե ինչպիսի աջակցություն կարող է ցույց տալ ֆրանսիական բանակը այդ հարձակման. գեներալ Ժոֆֆրը չդայնացած պատասխանեց՝ «ոչ մի»[23]։

Գեներալ Ալեքսեևը տեղյակ էր դաշնակիցների դավերին Ռուսաստանի նկատմամբ։ Նա զգում էր, որ Անգլիան ու Ֆրանսիան առաջին հերթին մտածում են միայն իրենց նեղ եսասիրական շահերի մասին։ 1916 թ. հունվարի 31-ին Ալեքսեևը գաղտնի նամակով հրահանգներ ու ցուցումներ է տալիս Փարիզ, գեներալ Ժիլինսկուն զգուշանալու անգլո-ֆրանսիական դիվանագետների նենգ որոգայթներից։ «Ցավոք, պետք է ասեմ,— գրում է Ալեքսեևը,— որ մեր շտաբում գտնվող ռազմական գործակալները ավելին են տեղյակ գործերին, քան այդ պետք է»[24]։ Այնուհետև, խոսելով Հարավ-արևելյան ճակատի անհաջողությունների, Հրետանու պակասի, Ռումինիայի անորոշ վիճակի, Անգլիայի պլանների՝ իր զորքերը Սալոնիկից փոխադրելու և այլնի մասին, Ալեքսեևը նշում է, որ ռուսական հրամանատարությունը այդ պլաններին նայում է խիստ բացասական, քանի որ դա հնարավորություն է տալիս թուրքերին եվրոպական մասից իրենց զորքերը փոխադրել Արևելյան Անատոլիա՝ ռուսական բանակի դեմ։ Անգլիացիները չօգնեցին ռուսներին նաև Միջագետքի օպերացիայի իրականացման ժամանակ։ Ալեքսեևը հույս չի դնում դաշնակիցների վրա նաև Բալկաններում և վտանգ է զգում, որ եթե Ռումինիան անցնի գերմանական բլոկի կողմը, վերջիններս կշարժվեն դեպի Օդեսա։

«Բալկաններում դաշնակիցների ակտիվության վրա հույս դնելը դժվար է, գրում է Ալեքսեևը։ Անգլիացիները բոլորովին մտադիր չեն ուժեղացնել իրենց զորքերը Սալոնիկում, ավելի շուտ թույլ են տալիս նրանց նվազումը, Ֆրանսիայում ուժեղացնելու համար։ Մի խոսքով իրենց ամբողջ ուշադրությունը կենտրոնացնում են ֆրանսիական ճակատի վրա։ ...Իմ հաշիվները Բաղդադի, Քիրմանշահի և Մոսուլի կողմից անգլիացիների հետ համաձայնեցված գործողություններով թուրքերի դեմ պայքարելու հարցում, խորտակվեցին։ ...Այն եզրակացությունը, որ Ֆրանսիան ունենալով 2 մլն. 200 000 զինվոր, պետք է լինի պասսիվ դիրքում, իսկ Անգլիան, Ռուսաստանը և Իտալիան պետք է «կազմալուծեն» Գերմանիային, միտումնավոր է և չի կապակցվում Ժոֆֆրի կոպիտ կարծիքների հետ, որ իբր թե միայն Ֆրանսիան է կռվում։ Կարծում եմ, հանդարտ, բայց ազդեցիկ հակահարվածը, վճռական տոնով նման անիմաստ արարքների դեմ դուրս գալը ստրատեգիական անհրաժեշտություն է։ Ինչ որ կա այժմ, նրանից վատը չի լինելու մեր հարաբերությունների մեջ։ Բայց մենք նրանց շատ ենք պետք, խոսքով նրանք կարող են քաջանալ, իսկ գործնականում նման քայլի չեն գիմի։ Այն ամենի համար, ինչ մենք նրանցից ստանում ենք, դրա համար նրանք մեզնից մեր վերջին շապիկն էլ կհանեն։ Դա ոչ թե օգնություն է, այլ շատ ուգտակար առևտուր։ Սակայն առևտուրը թեկուզ մի քիչ պետք է երկկողմանի լինի և ոչ թե միակողմանի»[25]։

Նման սպանիչ գնահատականը Ռուսաստանի և նրա դաշնակիցների հարաբերությունների մասին կարիք չի զգում որևէ մեկնաբանման։ Գերագույն շտաբի պետին ավելի մոտիկից հայտնի էին այդ հարաբերությունների արժեքը։ Հենց նույն նամակից մենք իմանում ենք, որ ռազմաճակատում գտնվող զինվորներից մոտ 350 000 մարդ անգամ հրացաններ չունեն և որ հրետանու արկերի պակասի պատճառով ռուս զինվորը հաճախ է հատուցում իր արյունով[26]։

Այսպիսի լարված մթնոլորտում, 1916 թ. մարտի 12-ին, նույն Շանտիլիեում բացվում է դաշնակիցների բանակների գերագույն հրամանատարների կամ նրանց ներկայացուցիչների 3-րդ կոնֆերանսը։ Ֆրանսիական դելեգացիան գլխավորում էր գեներալ Ժոֆֆրը, անգլիականը՝ Լորդ

---

[23] ЦГВИА СССР, ф. 203, оп. 1, д. 1165, л. 89—90.
[24] Там же, лист 100.
[25] ЦГВИА СССР, ф. 203, оп. 1, д. 1165, л. 101.
[26] ЦГВИА СССР, ф. 203, оп. 1, д. 1165, л. 102.

Կիտչենները, իտալականը՝ գեներալ Պորրոն, Սերբիայից մասնակցում էր գեներալ Պաշիչը, իսկ Ռուսաստանից՝ միայն գեներալ Ժիլինսկին։ Այդ օրերին Գերմանիան հուժկու գրոհներ էր սկսել Վերդենի ուղղությամբ։ Ռուսական բանակը դրոհով վերցրել էր Էրզրումը։ Անգլիացիները Ֆրանսիա էին փոխադրել նոր դիվիզիաներ։

Կոնֆերանսի հիմնական հարցը գործողությունների համաձայնեցումն էր և ընդհանուր հարձակման ժամկետի որոշումը։ Ընդհանուրի կարծիքն այն էր, որ հարձակումը կարելի է սկսել մայիսին։

Կոնֆերանսում տաք վեճեր են ծավալվում Սալոնիկից անգլո-ֆրանսիական զորքերը Եվրոպա փոխադրելու հարցի շուրջը։ Հասկանալի պատճառով տվյալ պահին Ռուսաստանին ձեռնտու էր, որ Սալոնիկից դաշնակիցները չհեռանան, որովհետև դա հնարավորություն կտար թուրքերին իրենց համարյա բոլոր ուժերը ուղղել Ռուսաստանի դեմ։

Գեներալ Ժիլինսկին վճռական տոնով կոնֆերանսում հայտարարեց հետևյալը. «...Մենք կարող ենք սկզբունքային որոշում ընդունել՝ չթողնել Սալոնիկը։ Հետևապես այնտեղ պետք է պահել զորք, 200 000—220 000 մարդ։ Նշանակում է՝ չի կարելի Սալոնիկից ոչինչ փոխադրել մինչև սերբական բանակի այնտեղ ժամանելը»[27]։

Անգլիական բանակի շտաբի պետ գեներալ Ռոբերտսոնը իր ելույթում ճարպիկ կերպով խուսափեց ռուսական բանակի ներկայացուցչի վճռական և կոնկրետ պահանջից և հայտարարեց, որ «Միակ սկզբունքը՝ դա զորքերի օգտագործումն է այնտեղ, որտեղ նրանք առավելագույն չափով օգտակար են, նայած իրադրությանը։ Մեզ պետք չէ, որ նախորոք կապկպենք մեզ»[28]։ Իսկ Ժոֆֆրն ասաց, որ 1—2 ամիս հետո ռազմաճակատում ստեղծված դրությունը մեզ կհուշի մեր անելիքը[29]։

Այսպիսով, դաշնակիցները չհամաձայնվեցին ռուսական բանակի հրամանատարության այնպիսի խնդրի կատարման հետ, որը թեկուզ և վճռական դեր չէր կարող խաղալ պատերազմի բախտի հարցում, սակայն որոշակի թեթևացում կլիներ։

Մարտի 13-ին Շանտիլիի ռազմական խորհրդակցությունը որոշում է հնարավորին չափ արագացնել դաշնակիցների բանակների նախապատրաստությունները ընդհանուր հարձակման անցնելու համար, իսկ կոնկրետ հարձակման ժամկետը թողնվում է գլխավոր հրամանատարների հայեցողությանը։ Խորհրդակցությունը անհրաժեշտություն է համարում ուժեղացնել Գերմանիայի տնտեսական բլոկադան։

Ռազմական խորհրդակցությունը մի տեսակ նախապատրաստություն էր Անտանտի տերությունների քաղաքական և ռազմական բարձր մակարդակի կոնֆերանսի համար, որը բացվեց նույն թվականի մարտի 27-ին, Փարիզում։

Կոնֆերանսին մասնակցում էին պրեմիեր մինիստրները, արտաքին գործերի ու ռազմական մինիստրները, գլխավոր հրամանատարները և բազմաթիվ էքսպերտներ։

Անգլիայից մասնակցում էին Ասկվիտը, Լ. Ջորջը, Ֆրենչը, Կիտչենը, Ֆրանսիայից՝ Բրիանը, Ալ. Ռոման և Ժոֆֆրը, Ռուսաստանից՝ Իզվոլսկին, Ժիլինսկին, Իտալիայից՝ Սալանդրան, Սոնինոն, Պորոն, Կադորանը, Սերբիայից՝ Վեսնիչը, Բելգիայից՝ Բրոկվիլը և այլն։

Գեներալ Ժոֆֆրը հաղորդում է Շանտիլիի ռազմական խորհրդակցության ընդունած բանաձևի մասին և հակիրճ կերպով նշում Վերդենի տակ մղվող կատաղի ճակատամարտի մասին։ «Ո՞րն է նրա (Գերմանիայի — Ա. Հ.) նպատակը,— ասում է Ժոֆֆրը։— Ջախջախել Ֆրանսիային, որպեսզի հետո, եթե հարկ լինի, դիմի դաշնակից ամեն մի բանակի առանձին-առանձին և վերջ տա նրանց։ ...Մենք պետք է կոտրենք գերմանական բանակի և ազգի ոգին, կոտրենք նրան այնպիսի ռազմական հաջողություններով, որը հակառակորդի մեջ կոչնչացնի հաղթանակի ամեն տեսակի հույս»[30]։

Կոնֆերանսը հավանություն է տալիս Ժոֆֆրի զեկուցման մեջ շարադրված հիմնական դրույթներին։ Փաստորեն ոչ ոք չի առարկում, որպեսզի Անտանտի պետությունները իրենց ռազմական գործողությունները վարեն համաձայնեցված կերպով։ Կյանքն ինքն էր առաջ քաշում այդ պահանջները և կոալիցիոն պատերազմի պայմաններում, անկախ նրա մեջ մտնող պետությունների միջև

---

[27] ЦГВИА СССР, ф. 203, оп. 1, д. 1165, л. 204. Գեներալ Ժիլինսկին հույս ուներ, որ դաշնակիցների օգնությամբ սերբական բանակը Կորֆու կղզուց վերազինված կփոխադրվի Բալկանյան թերակղզու հարավը, սակայն դաշնակիցները չէին խոստանում կոնկրետ օգնություն ցույց տալ սերբական բանակին։

[28] Там же, л. 208.

[29] Там же.

[30] ЦГВИА СССР, ф. 203, оп. 1, д. 1165, л. 219.

մշտապես բորբոքվող հակասություններին, իրադարձությունների զարգացման որոշ էտապներում միավորվում են և երկրորդական պլանի վրա մղում իրենց ներքին տարաձայնությունները։

Մենք այստեղ կանգ չենք առնի Իտալիայի, Սերբիայի ներկայացուցիչների ելույթների վրա, որոնք նկարագրելով իրենց բանակների վիճակը, խնդրում էին դաշնակիցներին օգնել իրենց հրետանիով, արկերով և ռազմական այլ տեխնիկայով։ Կանգ կառնենք միայն Իզվոլսկու և Ժիլինսկու ելույթների վրա, որոնցից դժվար չէ եզրակացնել, թե ինչպիսի դժվարություններ էր կրում ռուսական բանակը և ինչպես էին դաշնակիցները աշխատում օգտագործել այդ դժվարությունները նրա վրա ճնշում գործադրելու համար։

Գերմանական պաշտպանության գծերը ճեղքելու համար պահանջվում է հրանոթներ, ասում է Ժիլինսկին, որը ռուսական բանակը դեռ քիչ ունի, իսկ Անգլիան ու Ֆրանսիան իրենց խոստումներն այդ հարցում չեն կատարել։ Իտալիայից ստացած 700 000 հրացանները հնացած են և չեն կարող ռազմաճակատ ուղարկվել։ «Ռուսական կառավարությունը մեծ քանակությամբ հրացաններ է պատվիրել Ամերիկայում, բայց փոխադրումների դժվարության պատճառով դեռ չեն ստացվել»[31],— դժգոհում է գեներալ Ժիլինսկին։

Սակայն անգլո-ֆրանսիական դելեգացիան բոլորովին էլ մտադիր չէր ի հաշիվ իրենց շահերի որևէ զիջում անել Ռուսաստանին, որը 1915 թ. իր վրա էր վերցրել գլխավոր հարվածը և հնարավորություն տվել արևմտյան իր դաշնակիցներին ծավալելու ռազմական արդյունաբերությունը և զինելու իրենց բանակները։ Դեռ ավելին, Լորդ Կիտշները հայտարարեց, որ «Անգլիական գործարանների արտադրանքը հազիվ թե բավարարի անգլիական բանակի 1916 թվականի պահանջները և միայն հաջորդ տարվա հունվարից Անգլիան ի վիճակի կլինի ծանր հրետանի ունենալ դաշնակիցների համար»[32]։

Օգտագործելով Իտալիայի, Սերբիայի, ինչպես նաև Ռուսաստանի բանակների մատակարարման ասպարեզում եղած դժվարությունները, Ֆրանսիայի մատակարարման մինիստր Ալբերտ Թոման առաջարկություն է մտցնում, որպեսզի այդ երկրները բանվորական ուժ տրամադրեն Ֆրանսիական ռազմական արդյունաբերությանը։ Այդ գործը հիշտացնելու համար նա առաջարկում է վերացնել մի երկրից մյուս երկիրը գնալու համար գոյություն ունեցող ձևականությունները և փոփոխություն մտցնել իրենց սահմանադրությունում՝ հօգուտ անարգել երթևեկությունների։

Սա փաստորեն մի նոր փորձ էր ֆրանսիական ղեկավար շրջանների կողմից օգտագործելու հարմար մոմենտը և օտարերկրյա էժան բանվորական ուժի օգտագործումով հզորացնել իր երկիրը։

Մենք վերևում արդեն նշեցինք, որ ռուսական զորամասերի ուղարկումը Ֆրանսիա ինքնբուխինքյան մեծ զայրույթ էր առաջացրել ոչ միայն շարքային մարդկանց, այլ նաև բարձրաստիճան պետական պաշտոնյաների մոտ։ Խոսելով բանվորական ուժի մասին, տվյալ դեպքում պետք է հասկանալ հարկադիր և կազմակերպված ձևով այդ երկրներից Ֆրանսիա բանվոր ուղարկելու մասին։

Հանգամանորեն քննարկելով և որոշում ընդունելով Գերմանիայի դեմ տնտեսական բլոկադան ուժեղացնելու մասին, Անտանտի պետությունները նպատակ ունեին ճնշում գործադրել ոչ միայն Գերմանիայի, այլ նաև այն երկրների վրա, որոնք առևտուր էին անում Գերմանիայի հետ։

Անտանտի պետությունների 1916 թ. Փարիզի կոնֆերանսի որոշումները կարևոր դեր խաղացին հակագերմանական ուժերի մոբիլիզացման և այդ ուժերի ավելի նպատակասլաց ձևով օգտագործելու ուղղությամբ։ Դաշնակից պետությունների ներկայացուցիչները, ասված է կոնֆերանսի դեկլարացիայում, 1916 թ. մարտի 27—28-ը հավաքվելով Փարիզում, հաստատում են դաշնակիցների շահերի լիակատար ընդհանրությունն ու համերաշխությունը։ Նրանք հաստատում են բոլոր միջոցները և ուղիներն՝ իրականացնելու միասնական ճակատում միասնական գործողություններ։ Դրա տակ նրանք հասկանում են շտաբների միջև կնքված փոխադարձ համաձայնությամբ ապահոված միասնական ռազմական գործողություններ, տնտեսական գործողությունների միասնություն... և դիվանագիտական գործողությունների միասնություն, որը երաշխիք է ծառայում անհողդող կամքի, շարունակելու պայքարը ընդհանուր նպատակին հասնելու համար»[33]։

Սակայն անգամ Փարիզի կոնֆերանսից հետո արևմտյան տերությունները չկատարեցին իրենց պարտականությունները Ռուսաստանի նկատմամբ։

Ավստրո-գերմանական հարձակումը Իտալիայի վրա և գերմանական գրոհները Վերդենի շրջանում գդալի կերպով նեղել էին դաշնակիցներին։ Ժոֆֆրը իր հեռագրերից մեկում խնդրում

[31] Там же, л. 231.
[32] ЦГВИА СССР, ф. 203, оп. 1, д. 1165, л. 231.
[33] ЦГВИА СССР, ф. 203, оп. 1, д. 1165, л. 251.

Իր ռուսական բանակի շտաբի պետ գեներալ Ալեքսեևին Վերգենի շրջանում ստեղծված բացառիկ լարվածության պատճառով արագացնել ռուսական բանակի հարձակումը։ Հայտնի է այն խոշոր դերը, որ ունեցավ ռուսական բանակի հարձակումը հարավ-արևմտյան ռազմաճակատում գեներալ Բրուսիլովի հրամանատարությամբ։ Այդ հարձակման հետևանքով ավստրո-հունգարական բանակը փաստորեն դարձավ անմարտունակ հետագա մեծ մասշտաբի գործողությունների համար և հեշտացրեց ֆրանսիացիների վիճակը Վերգենի շրջանում։

Հայտնի է նաև այն, որ անգլո-ֆրանսիական բանակները ոչ մի ռեալ աջակցություն ցույց չտվին Ռուսաստանին, երբ հենց այդ նույն Բրուսիլովյան բանակը ծանր դրության մեջ էր ընկել և ստիպված էր զգալի չափով նահանջել իր գրաված դիրքերից։

Ռուսաստանում հասունանում էր հեղափոխական իրադրությունը։ Ժողովրդական մասսաները բուռն դժգոհություն էին ցուցաբերում դեպի շարունակվող պատերազմը։ Ռազմական անհաջողությունները կամ պատերազմի ձգձգումը ավելի էր լարում մթնոլորտը։

Անտանտի արևմտյան տերությունների ռազմա-քաղաքական ղեկավար շրջաններում լիովին տեղյակ էին այդ բոլորին։ Իրենց մոտ ևս նրանք ամենաբիրտ ձևերով էին ճնշում դժգոհության ամեն մի արտահայտություն։ Աստիճանաբար նրանք պակասեցնում էին իրենց պարտավորությունների կատարման տեմպերը ռուսական բանակի մատակարարման գործում։ Մի կողմից Ռուսաստանը նրանց անհրաժեշտ էր, որպես խոշոր դաշնակից Գերմանիայի դեմ պատերազմելու համար, իսկ մյուս կողմից չէին ցանկանում նրա հետագա հզորացումը։ Առավել ևս այն վտանգավոր էր դառնում, երբ լսում էին Ռուսաստանի հակապատերազմական տրամադրությունների և բոլշևիկյան լոզունգների տարածման մասին։

Այս հանգամանքը ևս լուրջ ճշգրտումներ էր մտցնում Անտանտի ռազմական համագործակցության պլաններում և աստիճանաբար ավելի ցցուն կերպով էր դրսևորվում դաշնակիցների ճնշումը Ռուսաստանի նկատմամբ։

А. О. АРУТЮНЯН

К ВОПРОСУ О РОЛИ РУССКОЙ АРМИИ В ВОЕННОЙ СИСТЕМЕ АНТАНТЫ

Резюме

Об истории первой мировой войны опубликовано не мало исследований, очерков, мемуаров и сборников документальных материалов.

Однако автор настоящей статьи считает, что несмотря на изобилие литературы о первой мировой войне, все же недостаточно освещен ряд важнейших вопросов, в частности, вопрос о правильном определении роли русской армии в борьбе против центральных держав.

Историки и военно-политические деятели Англии, Франции, отчасти и США тенденциозно преувеличивают роль своих вооруженных сил в поражении германского блока. Историческая правда, однако, заключается в том, что благодаря сокрушительным ударам русской армии в 1915—1916 гг. австро-венгерская и турецкая армии фактически потеряли свою боеспособность, германская же армия, в 1915 г. сосредоточившая свои основные силы против русского фронта, понесла огромные потери и не добилась более или менее ощутимых стратегических успехов.

Союзники России — Англия и Франция — стремились использовать плохое боевое снабжение русской армии и рассматривать Россию как неравноправного партнера.

В выступлениях представителей Англии и Франции на союзнических конференциях (Л. Джордж, Китчнер, Бриан, Жоффр и др.) ярко была выражена тенденция использовать русскую армию в узких интересах своих стран. Русское командование неоднократно давало должный отпор подобным попыткам, однако экономическая слабость страны всегда ставила его в затруднительное положение.

В статье на основе архивных и опубликованных материалов показывается, во-первых, как в правящих кругах союзников возникла и эволюционизировала идея необхо-

димости координации действий вооруженных сил против германского блока, как они практически решили эту сложную проблему и, во-вторых, как на встречах и конференциях делегации западных держав стремились в грубой форме воздействовать на представителей русской армии и русское правительство.

Действия русской армии в значительной степени способствовали успехам союзных армий. Однако сами англичане и французы в тяжелую пору русской армии подобную помощь ей никогда не оказывали.

Эта тенденция у западных держав не случайна. Руководствуясь своими эгоистическими интересами в угоду крупных монополий, они всегда стремились добиться победы чужими руками.